

ԾՐԱԳԻՐ
«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ»

1.	Ծրագրի նպատակը	Արցախյան երեք պատերազմների մասնակից, ազատամարտիկ Հրանտ Խաչատրյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Կարապետ Ուլինցու 14-2, ՀՎՀՀ՝ 00141643) և ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա, Վաշինգտոն պողոտա 1546 E):
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Մամիկոնյանց 58/Ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 00218098):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքրի բնակավայր 21-րդ փողոց 10/1, բնակարանաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	5,700,000 դրամ, որից՝ - «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ – 2,500,000 դրամ. - ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն - 3,200,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հրանտ Խաչատրյան, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Աքրի բնակավայր, 9-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 2:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի փետրվարի 20-ից մինչև սեպտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	28 տարի առաջ տեղադրված և արդեն քայքայված փայտյա տնակի ապամոնտաժում և գույություն ունեցող հիմքերի վրա պեմզայի էկոսալերով տնակի կառուցման համար անհրաժեշտ շինարարական նյութերի և գործիքների տրամադրում - 5,700,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 20-ից մինչև սեպտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ներքոհիշյալ շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում՝ - էկոսալերի - 728,000 դրամ, - ամրան, ցեմենտ, ավազ, ներքին հարդարման նյութեր – 3,287,000 դրամ - տանիքի կառուցման նյութեր – 680,000 դրամ - դռներ և պատուհաններ – 410,000 դրամ - այլ նյութեր և գործիքներ - 595,000 դրամ,
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ